



## Հ. Եղիսաբետին

(Պատմական գիտությունների  
քեկեածու, նեազետ)

# ՄՈՒՂՆՈՒ ՎԱՆՔԸ ԵՎ ՆՐԱ ՎԻՄԱԳԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա. ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

  
այ մշակովթի պահպանման և  
զարգացման ասպարեզում, ժէ  
դարի երկրորդ կեսը և ժԷ դարի  
առաջին քառորդը, համեմատա-  
բար, բեղուն ժամանակաշրջան էր:  
Այդ երեսով հատկապես նկատելի է ճար-  
տրապետության և եկեղեցինության  
բնագավառում:

Թագմանքիվ վանքեր, որոնք ավերվել ու  
ամայացել էին թուրք-թաթարական արշա-  
վանքների ժամանակ, վերականգնվում,  
վերահաստատվում և զգալի չափով ընդար-  
ձակվում են նշված ժամանակաշրջանում,  
ինչպես, օրինակ, Տաթիկի վանքը, Շատի-  
վանքը, Կնեվանքը, Ամաղու նորավանքը,  
Արկյագի Ս. Խաչ վանքը, Խոր Վիրապը,  
Ուշու Ս. Սարգիսը, Հավուց թառի Ամենա-  
փրկիլ վանքը և շատ ուրիշներ:

Հիմնադրում են նոր վանքեր ու մենաս-  
տաններ, ինչպես և քաղաքացիական ալլ  
կառուցվածքներ, որոնցից հատկապես  
նշանակալից են Տաթիկի մեծ անապատը,  
Շինուհայրի կուսանց անապատը, Հարանց  
անապատը, Դավիթ Բեկի բերդը և Հալի-  
ձորի անապատը նույն բերդում, Արիսաս-  
կա անապատը, Լիմ Կտուց անապատները  
Վանա լճի համանուն կղզիների վրա, Մա-  
լիքի Ամենափրկիլ անապատը, Երևանի Անա-  
նիս առաքյալի անապատը, Վահրամվարի  
Կարմիր վանքը, Զվարա վանքը, Ագուլիսի  
թուղմա առաքյալի վանքը, էջմիածնի Շո-  
ղակաթ վանքը, Մակուկի Թաղեռս առաքյալի

վանքը, Դարաշամբի Ստեփանոս նախա-  
վկայի վանքը, Երնջակի Ս. Կարապետի ման-  
քը, Երևանի կամուրջը Հրազդան գետի վրա,  
Աշտարակի և Օշականի կամուրջները Քա-  
սախ գետի վրա, Սատուրի կամուրջը Եղե-  
գիս գետի վրա, Տաթեկի վանքի ձիթհանը,  
Շատի վանքի շրաղացը և շատ ուրիշներ:

Թագմանքիվ քաղաքներում, գյուղերում,  
շենքրում և այլ բնակավայրերում կառուց-  
վում են եկեղեցական նոր շենքեր, որոնց  
թվում, որպես ճարտարապետական առավել  
աշքի ընկնող կոթողներ, նշանակալից են  
Երևանի Ս. Կաթողիկե, Ս. Զորավոր, Ս. Հովհաննես, Ս. Պողոս-Պետրոս եկեղեցինները և  
Գյոյմելետ մզկիթը, Կարրու Ս. Աստվածա-  
ծին եկեղեցին, էջմիածնի քաղաքային Ս.  
Աստվածածին եկեղեցին, Լենինականի Ս.  
Աստվածածին եկեղեցին, Քանաքեռի Ս. Հա-  
կոբ եկեղեցին, Դառնի ավանի Ս. Աստվա-  
ծածին եկեղեցին, Մեղրու Ս. Հովհաննես  
եկեղեցին, Կամոյի (Նոր-Թայազետի) Ս. Կա-  
րապետ եկեղեցին, Աստապատի եկեղեցին  
և այլն:

Մի շարք վանքերին կից բացվում են  
դպրոցներ, որոնց համար կառուցվում են  
հատուկ շենքեր:

Պատմական աղբյուրները նույնպես հի-  
շտակում են տվյալ ժամանակաշրջանի  
եկեղեցաշինության՝ մեծ թափի մասին:  
Ժամանակակից հայ պատմագիր Առաքնչ  
վարդապետ Դավթիթեցին, Խոսելով հայոց  
Փիլիպոս կաթողիկոսի կյանքի և գործու-

նեռվիյան մասին, այդ առթիվ տեղեկացնում է. «Եւ զդպրատումն՝ զոր ի Յոհանավանք Հաստատեցին, սա ևս կարի Հաստատեաց, և ուսմամբ և առաքինութեամբ վարժեալ Հասոյց ի կատարելութիւն. և յիտ ամաց ինչ փոխեաց ի Յոհանավանից և երեր ի Սուրբ էջմիածինն, և անդ կարգեաց զդպրոցն. որ և ամենեքեան ուսան և եղեն արք պիտանիք, վարդապետք, և եպիսկոպոսք, և քահանայք: Եւ վաղնջուց խափանեալ վանորայք լցան արեղայիւք, և գիւղք,

լորր բարաշար բարձր պարիսպներով՝ երեմն ամրոցապատերի ձևով: Ինչպես վանքերի ու անապատների, այնպես էլ քաղաքների և գյուղերի նորակառուց եկեղեցական շենքերի ճարտարապետական ոճը ընդհանուր է՝ եռանավ բազիլիկ ձևի, թաղակապ ծածկով, որոնք բոլորն էլ շարված են մաքուր տաշված բարերով, կրաշաղախով մածուցված:

Այդ բոլորի շարքում իր պատկառելի տեղն է գրավում Մուղնու վանքը. նա ավե-



ՄՈՒՂՆՈՒ ՎԱՆՔԻ ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑԻՆ ՀԱՐԱՎԱՐԵՎԵԼՑ

և բաղաքք՝ երիցամբք, և դեռ ևս օր յաւուր աճէ նորին սահմանադրութեամբն: Եւ սովար բազում կիսաւեր և խախտեալ եկեղեցիք նորոգեցան, և ի գիւղս և ի բաղաքք յոլով եկեղեցիք նոր շինեցան հրաշազան յօրինուածովք՝ պայծառ և փառաւոր ամենայն որպիսութեամբ»<sup>1</sup>:

Վերը թվարկված վանքերում և անապատներում, բացի եկեղեցական շենքերից, կառուցվում են նաև բազմաթիվ բնակելի և այլ շենքեր, շրջափակելով այդ բո-

լի ընդարձակ է, վեհաշուր՝ երկնասլաց գմբեթով:

Մուղնու վանքը գտնվում է այժմյան Աշտարակի շրջանի Մուղնի գյուղում՝ մեկ և կես կիլոմետրացափ Աշտարակից դեպի հյուսիս, Ապարանի վրայով դեպի Թրիլիսի տանող ճանապարհի վրա, Քասախի գետի անդնդախոր ձորի աջ ձորաեզրին: Վանքը բաղկացած է մեկ եկեղեցով՝ Ս. Գևորգ զորավարի անունով, միաբանության բնակելի շենքերից, որոնք շրջափակված են բարձր պարսպապատերով:

Թե ե՞րբ է հիմնադրվել Մուղնու վանքը, ոտուրդ հայտնի չէ: Ավանդությունն ասում է,

1. «Պատմութիւն» Առաքել վարդապետի հաւրիժաց, Վաղարշապատ, 1884 թ., էջ 250:

որ հայոց ներսես Մեծ հայրապետը գևորդ զորավարի մարմինը Բյութանիայի Նիկոմիդիա քաղաքից, որտեղ նա նահատակվել էր, բերում է Հայաստան և թաղում Հովհաննա վանքում: Հետագայում նրա նշխարժները փոխադրում են վանքից ոչ հեռու գտնվող Կարքի և Մուղնի գյուղերը: Խոկ ավելի ուշ Մուղնի գյուղին մոտիկ կառուցում են մի փոքր եկեղեցի՝ փայտաշեն գավթով, որը և ամփոփում են Ս. Գևորգ գորավարի նշխարժները, միաժամանակ նշանակելով վանական միաբանություն: Հենց այդ ժամանակից էլ, հավանաբար, հիմք է դրվում Մուղնու վանքին: Թե ե՞րբ է դա տեղի ունեցել, պարզ չէ: տեղում պահպանված նյութական մշակույթի որոշ մնացորդներ հիմք են տալիս ենթադրելու, թե այդ պետք է տեղի ունեցած լինի ԺԴ դարում:

Այսուհետեւ, ինչպես տեղեկացնում է Առաքել Դավթիծեցի պատմիլը, Փիլիպոսի կաթողիկոսության ժամանակ (1633—1655 թ. թ.), ի թիվս մի շարք մենաստանների ու եկեղեցիների, վերակառուցվում է նաև Մուղնու վանքը. «Սոցին նման շինհեցաւ յատկրս Տեառն Փիլիպոսի կաթողիկոսի, և վանքն Սրբոյն Գէորգայ զօրավարին, որ է ի գիւղն Մուղնի, որոյ մերձ գոլով գիւղաքաղաքին կարրու, սպասաւորութեամբ և արդեամբ Մարտիրոս եպիսկոպոսին, որ էր ի նոյն Մուղնի գեղջէն եպիսկոպոսն նոյն վանացն. որոյ եկեղեցին յոյժ փոքրիկ էր՝ և այլ ամենայն շինուածքն անպէտ և անդէպ. վասն որոյ այս Մարտիրոս եպիսկոպոս զեղեալ եկեղեցին, և զայլ ամենայն շինուածն միահղոյն ի բաց երարձ, և զնոր պարիսպ պատեաց շուրջանակի շաբաւոր, և եկեղեցի վայելու ի մէջ պարսպին ի վերայ չորից սեանց կառուցեալ, և առ պարսպօքն տներ և խցեր, զամենայն շինեալ աւարտեաց և եթող իւր յիշատակ բարի առաջի Աստուծոյ և մարդկան, և ինքն ևս անդէն թաղեցաւ<sup>2</sup>:

Մարտիրոս եպիսկոպոսի կառուցած եկեղեցին, որը շինված էր անտաշ քարերից, երկար գոյություն չի ունենում: Նրան հաջորդող դող վանքի առաջնորդ և նրա եղբորորդի Հովհաննես վարդապետը 1665 թվականին հիմնովին քանուում է այն, ինչպես այդ մասին տեղեկացնում են Զաքարիա սարկավագ պատմիլը և Հուշարձանի վրա փորագրված արձանագրությունը (արձանագրություն ա) և կառուցում այժմյան եկեղեցին՝ իր սրահով:

Սակայն Հովհաննես վարդապետին չի հաջողվում ավարտել եկեղեցու կառուցումը՝ վրա համոզ մահվան հետևանքով. ուստի

հետագա շինարարությունը նա հանձնարարում է իր հաջորդ և եղբորորդի Դավիթի վարդապետին, որը շարումակում և ավարտում է այն 1669 թվականին:

Եկեղեցու վրա փորագրված արձանագրությունների համաձայն նրա կառուցմանը օժանդակում են՝

ա. Մուղնու վանքի առաջնորդ, վերը հիշատակած Դավիթի վարդապետի եղբայր Վարդանը, կառուցելով եկեղեցու ներսի հարավ-արևելյան մուլթը և մի կամարը (արձանագրություն թ.):

բ. Ագուլիսի հոգևոր թեմի առաջնորդ Պետրոս վարդապետը, իր թեմական համայնքի հետ միասին, կառուցելով եկեղեցու արևմտյան դուռը (արձանագրություն գ):

Եկեղեցին կառուցող ճարտարապետը եղել է Վասպուրականի Հիղան գյուղացի քարգործ Սահակը, որը, սակայն, դեռ եկեղեցու շինարարությունը չավարտած, մահանում է և թաղվում վանքի արևելյան կողմի գերեզմանոցում: Ապա նրա փեսա Մուրադը շաշունակում և ավարտում է եկեղեցին:

Վանքը բազմիցս ենթարկվել է վերանորոգումների: 1830 թվականին, վանքի առաջնորդ, թելավեցի Ստեփանոս արքեահակոպոսը վերանորոգում է տանիքը, իսկ 1839 թվականին՝ գմբեթի վեղարի ծալրը, որը քանդվել էր կայծակի հարվածից:

Մարտիրոս արքեահակոպոս Կեսարացին, որը նիգեմ կաթողիկոսի տեղապահն էր և որի տեսչության տակ էր գտնվում Մուղնու վանքը, վերանորոգել է տալիս վանքի պարիսպը և միաբանության բոլոր շենքերը:

Աշտարակեցի Սիմոն Սաժումյանը, Գևորգ Դ կաթողիկոսի կարգադրությամբ, դառնալով Մուղնու վանքի հոգաբարձու, 1868 թվականին վերանորոգել է տալիս եկեղեցու տանիքը (արձանագրություն դ):

Աբել եպիսկոպոս Միհիթարյանը, դառնալով Մուղնու վանքի առաջնորդ, 1870 թվականին այնտեղ հիմնում է հատուկ դպրոց, որի համար կառուցում է առանձին շենքեր:

Մուղնու վանքը եպիսկոպոսանիստ կենտրոն է դառնում Մուղնեցի Մարտիրոս եպիսկոպոսի առաջնորդության ժամանակ, չնայած վանքի առաջնորդ Ոսկան վարդապետը դեռ 1580 թվականին այնտեղ հաստատել էր իր եպիսկոպոսական Աթոռը՝ անպաշտոն ձևով:


Մուղնու վանքը իր զարգացման առավել բարձր աստիճանին է հասնում Գևորգ Դ-ի կաթողիկոսության շրջանում, դառնալով Արևելյան Հայաստանի նշանավոր կրոնական կենտրոններից մեկը, նա միաժամանակ նշանակալից է եղել որպես խոշոր ուժուատեղի:

<sup>2</sup> Առաջին Դաւթիծեցի, էջ 269—270.

### Յ. ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ա. Խեորգ Եկեղիցի. — Գմբեթավոր ընդարձակ սրահի ձևով մի կառուցվածք է, ուղղանկյուն երկարածիք հատակագծով: Ներսում չորս մույթերը միանալով լայն կամարներով, իրենց վրա են կրում բարձր գմբեթը՝ կլոր թմբուկով և սրածայր վեղարով, որը հիմքին փոխանցվում է առագաստների միջոցով:

Երբի քառասուիճան քարյա սանդուղքներով: Արսիդի երկու կողմերում կան ուղղանկյուն հատակագիծ և թաղակապ ծածկ ունեցող մեկական խորաններ, որոնց մուտքերը արևմտյան կողմից են և բացվում են եկեղեցու մեջ:



ՄՈՒԼՆՈՒ ՎԱՆՔԻ ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳ

ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԴՈՒՌԸ

Միաժամանակ այդ մույթերի արտաքին կողմերից ձգվող համեմատաբար նեղ կամարների ծայրերը հենվում են նրանց դիմաց՝ արևմտյան, հարավային և հյուսիսային պատերից, ինչպես և արևելյան արսիդի եղթերից ձգվող որմասյուների վրա, այսպիսով կազմելով թաղակապ ծածկը՝ երկթեր տանիքով:

Արևելյան ծայրում ունի կիսակլոր մեծ արսիդ՝ բարձր, դուրս շեշտված բեմով, ուր բարձրանում են դուրս շեշտված մասի ծայ-

երկու խոշոր մուտքերը բացվում են արևմտյան և հարավային պատերի կենտրոնական մասերից, որոնք ունեն կամարակապ ճակատակալ մեծ քարեր և գեղեցկաքանդակ շրջանակներ: Կամարակապ գագաթով և ներսից լայն բացվածքով քանի լուսամուտներից ութը բացվում են գմբեթի թմբուկի մեջ և երեքական հատ՝ յուրաքանչյուրի պատի մեջ՝ համաշափ դասավորված: Ներսում, պատերի մեջ կան տարրեր մեծությամբ բազմաթիվ խորշեր, բոլորն էլ կա-

յարակապ գագաթով, ոմանք շատ խորը, Մեկական նույնաձև, բայց շատ մեծ խորշեր էլ կան արևմտյան պատի մեջ, արտաքուստ, դրան երկու կողմերում, գոյացած սրահի եկեղեցուն կից շարված որմասյուներից:

Երևամտյան կողմում, կից ունի հատուկ սրահ՝ զանգակատուն, հինգ կամարակապ մեծ բացվածքներով՝ երեք արևմտյան և մեկական հարավային ու հյուսիսային կողմերից: Մածկը թաղակապ է, տանիքի կենտրոնում բարձրանում է սյունազարդ զանգակատունը՝ 12 գեղեցիկ սյուների վրա:

Հուշարձանը հիմնականում կառուցված է ու տուփի մաքուր տաշված բարերով՝ կրաշաղախով մածուցված. օգտագործված է նաև կարմիր տուփ, որից ամբողջապես կառուցված է զանգակատունը: Սալահատակված է, տանիքը պատած է սալաքարերով, կանգուն և ամբողջական վիճակում է:

Վանքի միաբանության բնակիչի և այլ շենքեր գտնվում են եկեղեցու արևելյան, հարավային և հյուսիսային կողմերում: Հյուսիսային կողմի բնակելի շենքերի մի մասը շարված է նույն տուփի մաքուր տաշված բարերով, կրաշաղախով, ծածկը թաղակապ,

իսկ մյուսները շարված են մանր քարերով, ցեխով և փայտածածկ են: Դրանց վրա գտնվում է Արել եպիսկոպոս Միհիթարյանի եղանակից կառուցված դպրոցի շենքը՝ երկրորդ հարկի ձևով:

Սեղանատունը գտնվում էր եկեղեցու հարավային կողմում՝ մեծ սրահի ձևով. շարված էր կիսատաշ քարերով, կրաշաղախով: Ներսում, պատերին կից ձգվող որմասյուները միացնող կամարները, որոնք մաքուր տաշված քարից էին, գոտկում էին թաղակապ ծածկը: Այժմ ամբողջապես ավերակ վիճակում է:

Պարիսպը ձգվում է եկեղեցու և միաբանության շենքերի շուրջը՝ կից վերցիններին: Խիստ բարձր է, շարված մանր քարերով, ցեխով: Գլխավոր մուտքը հյուսիսային կողմից է. մի փոքր մուտք էլ բացվում է արևմտյան կողմից:

Զամբարը գտնվում է պարսպի ներսում՝ հյուսիս-արևմտյան անկյան մասում: Փոքր է, մատուի ձևով. շարված է մաքուր տաշված ամուր քարերով, կրաշաղախով, թաղակապ ծածկով:

#### Գ. ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա. ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՊԱՏԻ ՎՐԱ, ԱՐՏԱՔՈՒՍ, ԳՈԱՆ ՀՅՈՒՍԽԱՅԻՆ ԿԹՂՄԻ  
ՄԵՇ ԽՈՐՃԻ ՄԵՋ.

1. Շնորհօնն Տեառն ամենակալի
2. ի թվին: ՌՃՃԳ: (1664) ի բագաւորութեան Պարսից փոքր
3. Շահնապաղին եւ ի բնակալութեան երկրին Ապաղու-
4. լի խանին եւ ի հայրապետութեան հայոց Տեառն Յակոբայ
5. սրազան կարուտիկոսին Սուրբ Էջմիածնի որո երամանաւ եւ օժանդակութեամբ բղ-
6. բավ, բանի եւ արդեամբ բնդմանուր երիստոնից տրիք, ընդ նմին եւ
7. զամենայն ինչու եւ բատացուած նոգոյս եւ մարմնոյս վատնեցի ես
8. Յովհանեսու վարդապետու Մողնեցի, որդի Յակոբայ, եղրօն որդի
9. Մարտիրոս եպիսկոպոսին, բակեալ ի հիմանց Սուրբ Գէորգայ եկեղեցին եւ շինեցի
10. զա հանդերձ գաւրովս երաշակերտ յօրինուածօք՝ ներքուատ եւ արտաքուատ կոփածն բարօք
11. ի թվին ՌՃՃԲ-ին (1669) ի բագաւորութեան Պարսից Շահ Սովէմանին եւ ի բնակալութեան երկրին Մէֆի-
12. Ղուի խանին աւարտեցի եւ սա ընա աւարտեցայ ի կենցաղոյ, եւ փո-
13. խեցայ առ Տէրն ամենից, մեաց միայն զիլի սալին եւ ներքին դօշամէն
14. եկեղեցոյն եւ գաւրիս, զորս կտակաւ յանձն արարի եղրօն որդոյ իմոյ Դա-
15. փր վարդապետին՝ փոխանորդ լինել ինձ եւ կտարել զպակասութիւն եկեղեցոյն
16. եւ գաւրիս որդ տեսանէք զյիշատակս իմ Աստուած ողորմի ասացէք ինձ եւ ծեռղաց իմոց,
17. Տէր Աստուածն ձեզ ողորմեսցի՝ ամէն: Ալէխսան բարտուղար հայոց յիշցէք ի քրիստոս:

բ. նկեղեցն ներսում, ՀԱՐԱՎ-ԱՐԵՎԵԼՅԱՆ, ՄՈՒՏՔԻ ԱՐԵՎՄԱՆ ԿՈՂԻ ՎՐԱ.

1. Յիշեցէք ի Քրիստոս զպառն
2. Վարդանն որ է եղրօղորդին
3. Յովհաննէս վարդապետի՝ շինողի
4. Սուրբ եկեղեցոյս եւ զարդին եւ
5. Եղբայր Դաւիթ վարդապետին՝ փոխնոր-
6. դի նորին որ ի հալալ ընչից իւրոց ետ
7. վասրեն շինութեան այս սեանս եւ :Ա:
8. կամարին յիշատակ հոգոյ իւրոյ
9. եւ ծնողացն՝ հօրն Կարապետին
10. եւ մօրն Թուրլանդին, եղբարցն՝
11. Զամարիային եւ Մարգարէին եւ կե-
12. նախցաց նոցին, զարմից եւ զաւակաց,
13. կենդանեաց եւ հանգուցելոց: Որք ողոր-
14. մի ասէք՝ Տէր Աստուած ձեզ ողորմեսցի՝ ամէն:
15. Գրեցաւ ի բոին :Ռ:Ճ:Ժ:Թ: (1670) ձեռամք Ալեքսանդրին:

գ. նկեղեցն ԱՐԵՎՄԱՆ ՄՈՒՏՔԻ ՃԱԿԱՏԵԱԼ ՔԱՐԻ ՎՐԱ, ԱՐՏԱՔՈՒՏ.

1. Շնորհօն Ասաուծոյ ես Պետրոս վարդապետ որ յԱզովեաց, անձամք եւ ժո-
2. դովրդեամք իմով յօժանդակ եղէ շինութեան սուրբ եկեղեցոյս
3. եւ շինեցի զդուունս Արքոյ Գէորգայ զօրավարի՝ Երկեամատակ կամարօֆ
4. եւ կանգնեցի ի վերայ զուուր խաչ մի՛ ի բարեխօսութիւն հօրենրօն
5. իմոյ Տեառն Խաչառոյ արհեպիսկոպոսին՝ Գողրան զաւառի եւ բեմբասազ
6. վարդապետի. յիշեցլէ ի Քրիստոս, ամէն: ի բուին Ռ:Ճ:Ժ:Թ: (1669):

դ. նկեղեցն ԱՐԵՎՄԱՆ ՄՈՒՏՔԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՂՄԻ ՈՐՄԱՆՅԱՆ ԿԱՄԱՐԻ ՄԱՅՐԻՆ. ԱՐԱՀՆԵՐԻ ՆԵՐՍՈՒՄ.

1. Ի 1868 ամ հրամանաւ արժանընտիր
2. կարուղիկոսի Ամենայն Հայոց Տեա-
3. ոն Գէորգայ Գ-ի կարգեցայ հո-
4. զարարձու Աշտարակեցի Սիմէօն
5. Սամումեանց Սուրբ Գէորգայ վա-
6. նիցս եւ արդեամք նորին Վեհափա-
7. ոուրեան նորազեցի զիսախ-
8. տեալ տանիսն տանարիս:

ե. նկեղեցն ԱՐԵՎՄԱՆ ՊԱՏԻ ՎՐԱ, ԱՐՏԱՔՈՒՏ, ՄՈՒՏՔԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՂՄԻ ԽՈՐՃԻ ՄԵջ.

1. Ես Սիմէօն Սամումեանց Աշտարակեցի 1868
2. ամի հրամանաւ արժանընտիր Հայրապետին Ներսէսի
3. Հինգեռորդի կարգեցա տեսուչ վահից Սուրբ
4. Գէորգայ զորպիսի պաշտօն զկնի մահուան
5. յիշեալ Հայրապետի շարունակեցի հրամանաւ
6. Սինօղի: 1868 ամն:

